ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1442-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2026 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1442-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման,

ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) ներմուծման, տեղափոխման և արտահանման, ինչպես նաև պետական սահմանի անցման կետերում մաքսային մարմինների կողմից սահմանային պետական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն և 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1442-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը?

1) Հավելվածի 21.1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ?

«1) Հայաստանի Հանրապետության տարածք՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով՝ մինչև 2027 թվականի մարտի 31-ը թույլատրվում է ներմուծել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ՝ 0102 21, 0104 10 100 0, 0104 20 100 0՝ Եվրոպական միության անդամ պետություններում, Շվեյցարիայում բուծված (տոհմային) ապրանքները, 0206, 0207, 0209, 0210, 0301, 0302, 0303, 0304, 0305, 0306, 0307, 0308 (բացառությամբ քաղցրահամ ջրերում բուծվող իշխանազգի, թառափազգի և կարպազգի ձկնատեսակների), 1601 00, 1602, 1604 (բացառությամբ քաղցրահամ ջրերում բուծվող թառափազգի ձկնատեսակից ստացված խավիարի), 1605 ծածկագրերի Եվրոպական միության անդամ պետություններում, Մեծ Բրիտանիայում և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում, Իսլանդիայում, Նորվեգիայում, Շվեյցարիայում, Կանադայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրված ապրանքները, 0202 30 500 ծածկագրի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրված ապրանքները, 0201 30 000, 0202 30 900, 0210 11 1, 0210 2, 0210 99 (բացառությամբ 0210 99 2), 1601 00 (միայն ընտանի թռչունների մսից և սննդային ենթամթերքից պատրաստված արտադրանքը), 1602 3, 1602 4 ծածկագրերի՝ Վրաստանում արտադրված ապրանքները։»?

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն.Փաշինյան